ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 փետրվարի 2020թ. թիվ 179-Ա

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ»
ՊՓԲԸ-Ի ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 19-Ա
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «իզ» կետի, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի տնօրենի 2019թ. փետրվարի 1-ի թիվ 01/90 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. հունվարի 18-ի «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 19-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. փետրվարի 3
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. փետրվարի 3-ի
թիվ 179-Ա որոշման

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊՓԲԸ-Ի ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ

Հ/Հ	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավորը	Գինը /ՀՀ դրամ/
1.	Զենք կրելու համար հոգեկան վիճակը հավաստող տեղեկանքի տրամադրում	հատ	6000
2.	18-ից բարձր տարիքի անձանց հոգեկան վիճակը հավաստող տեղեկանքի տրամադրում	հատ	4000
3.	Քաղվածք արխիվային փաստաթղթերից	հատ	3000
4.	Էլեկտրաէնցեֆալոգրաֆիա	հատ	8000
5.	Հոգեբույժի, նարկոլոգի խորհրդատվություն դիսպանսերի սպասարկման տարածքից դուրս (ք.Վանաձոր, Գուգարքի տարածաշրջան) առանց ուղեգրի՝ քաղաքացու նախաձեռնությամբ	այց	5000
6.	Հոգեբույժի, նարկոլոգի խորհրդատվություն տան պայմաններում (Վանաձորում)	այց	10000
7.	Հոգեբույժի, նարկոլոգի խորհրդատվություն տան պայմաններում (Վանաձորից դուրս)	այց	30000
8.	Հոգեբանի խորհրդատվություն	այց	5000
9.	Նարկոլոգիական հիվանդների կամավոր ամբուլատոր և պահպանողական բուժում, եթե անձը ՀՀ քաղաքացի չէ, կամ չի ներկայացնում ՀՀ քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ	այց	10000
10.	Սթափության զննություն կազմակերպությունների կամ քաղաքացիների նախաձեռնությամբ	հատ	6000
11.	Մեթադոնային փոխարինող բուժում /1-ամսյա կուրս/	ամսական	85000
12.	Ներկա հոգեկան վիճակի վերաբերյալ եզրակացություն տնային պայմաններում՝ հանձնաժողովային կարգով	այց	25000
13.	Հոգեբուժական հանձնաժողովային վկայարկում քաղաքացիների նախաձեռնությամբ	հատ	10000
14.	Ամբուլատոր ԴՀՓ քաղաքացիական գործերով		
14.1	դիսպանսերում		25000
14.2	տնային պայմաններում /Վանաձորում/		30000
14.3	տնային պայմաններում /Վանաձորից դուրս մինչև 30 կմ/		50000
14.4	տնային պայմաններում /Վանաձորից դուրս 30 կմ-ից ավելի/		70000
15.	Նարկոլոգիական հիվանդանոցային բուժում ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց համար, 10-օրյա միանվագ մուծումով (յուրաքանչյուր օրը 15000 դրամ)		150000
16.	Նարկոլոգիական հիվանդների սննդով ապահովում (10-օրյա		15000

	միանվագ մուծումով)		
17.	Առանձին հիվանդասենյակ առանց լոգարանի	օր	4000

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

02/04/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ